# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՆԻՄԵԴ ՍՊԸ-ն ՉՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-67/25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Բժշկական մահճակալներ | Բժշկական մահճակալներ | Բժշկական մահճակալներ | Բժշկական մահճակալներ | "Էլեկտրական ֆունկցիոնալ հիվանդանոցային մահճակալ Նախատեսված է ստանդարտ հիվանդասենյակների, անհետաձգելի բուժօգնության և վերակենդանացման բաժինների համար: Ունի էլեկտրական կառավարում՝ հնարավորություն կարգավորելու մահճակալի բարձրությունը, ինչպես նաեւ գլխային եւ ազդրա-ոտքային հատվածների թեքությունը: Կառավարումը իրականացվում է հեռակառավարման վահանակի միջոցով: Մահճակալի կառուցվածք՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Չափսերը՝ երկարությունը՝ 2160մմ, լայնությունը՝ 960մմ, բարձրությունը՝ 450 - 600մմ (±50մմ) Հիմքը պատրաստված է դիմացկուն հատվածավոր պողպատե խողովակներից կամ պողպատե շերտերից, որոնք ապահովում են կայունություն եւ երկարակեցություն։ Հանվող ABS պլաստիկ գլխամաս և ոտնամաս։ Ալյումինե ծալվող կողային բազրիքներ (զույգ)՝ ապահովում են հիվանդի անվտանգությունը։ Չափսերը՝ 1430x35x350 մմ (±20մմ) Ֆունկցիոնալ հնարավորություններ՝ Գլխային հատվածի բարձրության կարգավորում՝ 0-75° (±5°) Ազդրա-ոտքային հատվածի բարձրության կարգավորում՝ 0-35° (±5°) Մահճակալի բարձրության կարգավորում՝ 470-610մմ (±20մմ) Կառավարվում է հեռակառավարման վահանակի (պուլտի) միջոցով CPR (Կարդիոպուլմոնար վերակենդանացում) համակարգ՝ արտակարգ իրավիճակների համար Մահճակալի ալյումինե ծալվող կողային բազրիքները պետք է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համալրված լինեն շարժական /հանվող-դրվող/ սեղանիկով, որի չափսերն են` (ԵxL) 104սմx28սմ (±3սմ): Ներքնակի բնութագրերը` Չափսերը` 2000×850×80մմ (ոչ պակաս, քան 80մմ սպունգ, խտությունը` ոչ պակաս, քան 20կգ/մ3), չսահող եւ ամուր կցված է մահճակալին, ծալվում է մահճակի համապատասխան հատվածի հետ: Ունի օդի անցքեր, որոնք թույլ են տալիս օդի բնական շրջանառություն: Անհրաժեշտության դեպքում կարելի է հեռացնել կամ փոխարինել սպունգը: Տրանսպորտային համակարգ` 125մմ տրամագծով անիվներ: 4 հավելյալ ոտք` անշարժ ֆիքսման համար: Լրացուցիչ պարագաներ` Շարժական շտատիվ` կարգավորվող բարձրությամբ, առնվազն 4 կախիչներով: Առավելագույն ծանրաբեռնվածությունը` առնվազն 250 կգ: Քաշը` ոչ ավելի, քան 90 կգ: Արտադրող ընկերության ISO սերտիֆիկացում: Ապրանքները պետք է ունենան բոլոր անհրաժեշտ լրացուցիչ պարագաները, որոնք անհրաժեշտ են լիարժեք |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գործունեության համար: Պետք է լինի նոր, չօգտագործված, փակ գործարանային տուփով, օգտագործողի հայերեն կամ ռուսերեն ձեռնարկով: Մատակարարը պետք է ապահովի ապրանք անվնաս տեղափոխումը, տեղադրումը, աշխատանքային ռեժիմի բերումը: Գործարկումը պետք է կատարվի բժշկական կենտրոնի տարածքում՝ պատվիրատուի ներկայացուցչի ներկայությամբ: Տեղադրումը, ուսուցումը և երաշխիքային ժամկետի ընթացքում տեխնիկական սպասարկման աշխատանքներ՝ սերտիֆիկացված մասնագետի կողմից: Պայմանագրի կատարման փուլում արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխիքային նամակի ներկայացում: Երաշխիք՝ ոչ պակաս 1 տարի: " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՆԻՄԵԴ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՁՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-67/25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |